Բյուջեներ քաղաքացիների համար

Ելակետային գնահատման հետազոտություն

Զեկույցի նախագիծ

Պատրաստված է Քարլ Ուլբրիխտի կողմից

Երևան, 2023

Իրավաբանների հայկական ասոցիացիան հանձնարարել է այս ելակետային ուսումնասիրությունը՝ օժանդակելու Ծրագրի հետագա աշխատանքը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությանը Հայաստանի բյուջետային գործընթացներին և այդ ոլորտում մոնիտորինգի և շահերի պաշտպանության արդյունավետ իրականացմանը նպաստելու նպատակով:

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ «Բյուջեներ քաղաքացիների համար» (B4C) ծրագրի շրջանակներում:
Սույն հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն և այն ոչ մի կերպ չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Ելակետային ուսումնասիրությունը կազմել է Քարլ Ուլբրիխտը՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի համար:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1995 թ.-ին, նպատակ ունենալով ստեղծել հզոր քաղաքացիական հասարակություն և օժանդակել Հայաստանի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության զարգացմանը: Կազմակերպությունը իր ներդրումն է ունեցել հակակոռուպցիոն և գողացված ակտիվների վերադարձման, մարդու իրավունքների և գենդերային հավասարության, բյուջետային գործընթացների, լավ կառավարման և օրենքի գերակայության ոլորտներում Հայաստանի հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում:

Եվրոպական միության ֆինանսավորմամբ գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ազորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը: Ծրագրի թիրախային ոլորտներն են արդարադատությունը, կրթությունը, սոցիալական ոլորտը և գյուղատնտեսությունը:

© Իրավաբանների հայկական ասոցացիա 2023
Նալբանդյան 7, գրասենյակ 2, ք. Երևան 0010
Հեռախոս: +374 10 540199
Էլ. փոստ՝ info@armla.am
Ինտերնետային կայք՝ https://armla.am/

Բովանդակություն

Հապավումներ 4
Ամփոփագիր 4
Ներածություն 6
Մեթոդաբանություն 6
Բացահայտումներ և քննարկումներ 11
Եզրակացություններ և առաջարկություններ 25
Հավելվածների ցանկ 33

Հապավումներ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալ հարցերի նախարարություն
ԲԲՀ	Բաց բյուջեների հետազոտություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցացիա
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
EUD	Եվրոպական Միության պատվիրակություն
TI	Թրանսփարենսի Ինթերնեշնլ

Ամփոփագիր

Այս զեկույցը ելակետային ուսումնասիրության արդյունք է, որը պատվիրակել է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության տեղեկացվածության, կարիքների և օգտագործման վերաբերյալ տվյալներ հավաքագրելու և վերլուծելու նպատակով՝ ծրագրի հետագա ընթացքը հագեցնելու համար:

Ելակետային ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թվականի մարտ-մայիս ժամանակահատվածում և ներառում էր առցանց հարցաշար, որը լրացրել էին 81 ՔՀԿ-ներ, ինչպես նաև հարցազրույցներ շահագրգիռ կողմերի հետ, ֆոկուս խմբային քննարկումներ և նախարարությունների բյուջետային հայտերի հանրային քննարկումների մասնակցությունը:

Արդյունքները ցույց են տալիս բյուջեի տեղեկատվության իրազեկվածության և օգտագործման ցածր մակարդակ, որտեղ 13.8%-ը ընդհանրապես չեն օգտվել պետական բյուջեի տեղեկատվությունից, իսկ ՔՀԿ-ների 43.8%-ը օգտվել են տարին միայն մեկ կամ երկու անգամ: Տեղեկատվություն ստանալու ամենաշատ օգտագործվող աղբյուրները նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կայքերն են: Չնայած ՔՀԿ-ների 32.5%-ն ասում է, որ մասնակցել է բյուջեի քննարկումներին, դա մեծամասամբ եղել է մինչև 2022 թվականը և շատ դեպքերում եղել է ոչ թե պետական մարմինների, այլ ՏԻՄ-ի հետ: Միայն ՔՀԿ-ների 6%-ն է մասնակցել քննարկումներին 2022 թվականին, ինչպես նաև նախորդ տարիներին: Ավելին, ՔՀԿ-ների միայն 20%-ն է հսկել բյուջեի իրականացման գործընթացը, և պետական շահագրգիռ կողմերի արձագանքները ցույց են տալիս, որ 2022 թվականին գրեթե որևէ մոնիտորինգ չի կատարվել:

Զարմանալի չէ, որ ՔՀԿ-ների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 90%) երբեք չի մշակել պարզեցված (քաղաքացիների) բյուջեներ, և միայն մեկ ՔՀԿ է մշակել այդպիսի բյուջեներ 2022 թվականին:

Մասնակցության խոչընդոտների հիմնական պատճառները ներառում են տեղեկացվածության բացակայությունը (70%), կարողությունների բացակայությունը (70%) և ժամանակի սղությունը (43.8%):

Թեև հարցման մասնակիցների 37.5%-ը նշել է, որ իրականացրել է պետական բյուջեի վերաբերյալ շահերի պաշտպանություն, իրականում այդ թիվը ավելի քիչ է, և միայն 10%-ն է վերջին տարիներին զբաղվել շահերի պաշտպանությամբ: Շահերի պաշտպանությամբ չզբաղվելու պատճառներից են ռեսուրսների բացակությունը (68.8%) և շահերի պաշտպանության գործիքների մասին տեղեկացվածության պակասը (51.3%): Շատերը նաև պնդում են, որ իշխանությունները չեն ցանկանում համագործակցել (38,8%):

Հիմնական հմտությունները, որոնք ՔՀԿ-ները ձգտում են բարելավել, բյուջեի վերլուծությունն է (83.8%) և բյուջեի տեղեկատվության հասանելիությունն ու օգտագործումը (82.5%), որին հաջորդում են մոնիտորինգը (73.8%) և շահերի պաշտպանությունը (71.3%): Հիմնական խնդիրը, որը ՔՀԿ-ները նշել են իրենց շահերը պաշտպանելու հմտությունները բարելավելու համար, ազգային և միջազգային շահերի պաշտպանության փորձի մասին տեղեկատվությունն էր: Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները պետք է բարելավեն իրենց ֆինանսական կայունությունը, ինչպես նաև հմտություններ ձեռք բերեն ռազմավարական պլանավորման և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում, ներառյալ ցանցերում և կոալիցիաներում մասնակցությունը:

ՔՀԿ-ների մեծ մասը երբեք չի մասնակցել բյուջեի հետ կապված դասընթացներին. նրանք, ովքեր մասնակցել են, ընդհանուր առմամբ եղել է մինչև 2021 թվականը, մինչդեռ վերջին 2 տարվա ընթացքում վերապատրաստումները հիմնականում տրամադրել է ՏԶՀԿ-ն:

Բացահայտումները նաև տրամադրեցին ելակետային տվյալներ 2022 թվականին ՔՀԿ-ների ներգրավվածության մակարդակի վերաբերյալ, և ցույց տվեցին, որ միայն մի քանի ՔՀԿ-ներ ունեն և՛ հմտություններ, և՛ կարողություններ այս ոլորտում, մինչդեռ իրազեկվածության ընդհանուր մակարդակը նույնպես ցածր է:

Եզրակացությունները և առաջարկությունները կենտրոնանում են ՔՀԿ-ների իրազեկման և մասնակցության, շահերի պաշտպանության, կարողությունների զարգացման կարիքների և ծրագրի վեբկայքի/պլատֆորմի, ինչպես նաև այլ հարցերի շուրջ: Իրազեկվածության և մասնակցության ցածր մակարդակը ոչ միայն ՔՀԿ-ների կարողությունների սահմանափակմամբ է պայմանավորված, այլ նաև որոշ պետական մարմինների պասիվ մոտեցման հետևանքով: Ամեն դեպքում, մի շարք առաջարկություններ առաջ են բերում ուղիներ, որոնցով պետական մարմինները կարող են խրախուսել ՔՀԿ-ների հետ ավելի մեծ ներգրավվածությունը: Դրանցից են ՔՀԿ-ների մոնիտորինգի ջանքերի ֆինանսավորումը, բյուջեի առաջնահերթ խնդիրների վրա շեշտադրումը և քննարկումների ակտիվ խթանումը:

Ինչ վերաբերում է շահերի պաշտպանությանը, ապա անհրաժեշտ է, որ ծրագիրը աջակցի, որպեսզի ՔՀԿ-ները հաղթահարեն պետական մարմինների ընկալունակ չլինելու մտահոգությունները: Կան նաև կարողությունների զարգացման մի շարք կարիքներ, ներառելով բյուջեի վերլուծության ժամանակ կարևորագույն հարցերի վերաբերյալ առաջարկությունները: Ընդհանուր առմամբ, ինչ վերաբերում է կարողությունների զարգացմանը, զեկույցում ընդգծվում է, որ աջակցություն է անհրաժեշտ և՛ բյուջետային ոլորտի հատուկ հմտությունների, և՛ ՔՀԿ կառավարման և կայունության առումով:

Առաջարկությունների լայն շրջանակ հավաքվել է տեղեկատվության և մեթոդաբանական նյութերի վերաբերյալ, որոնք կարող են ներառվել ծրագրի կայքում/պլատֆորմում, և դա արտացոլում է ՔՀԿ-ների ցանկությունը՝ մեկ տեղից օգտվելու տեղեկատվության ողջ սպեկտրից, որը կարող է օգնել նրանց:

Վերջապես, եզրակացությունների և առաջարկությունների բաժնում ընդգրկված այլ հարցերից են ծրագրի տրամաբանական կառույցվածքի տարբեր ցուցանիշների և արժեքների վերլուծություն՝ այն համապատասխանաբար թարմացնելու առաջարկով:

Ներածություն

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ղեկավարությամբ իրականացվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի հովանու ներքո իրականացվել է ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության իրազեկության, կարիքների և օգտագործման ելակետային գնահատում: Գնահատման հիմնական նպատակն էր.

- Ուսումնասիրել և գնահատել ՔՀԿ-ների իրազեկությունը, կարիքները և կարողությունները՝ իրականացնելու պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների մշտադիտարկում (մոնիտորինգ) և վերլուծություն, ներառյալ պարզեցված (քաղաքացու) բյուջետավորումը,
- Ուսումնասիրել և գնահատել ՔՀԿ-ների իրազեկությունը, կարիքները և կարողությունները բյուջետային գործընթացի ընթացքում մասնակցային բյուջետավորման և շահերի պաշտպանության ոլորտում,
- Տրամադրել խորաթափանցություն ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ՝ ծրագրին տեղեկացնելու առկա բացերի և խնդիրների մասին, որոնց վրա պետք է կենտրոնանալ ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված միջամտություններ մշակելիս:
- Տրամադրել ելակետային տվյալներ ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ, որոնք կարող են օգտագործվել ծրագրի արդյունավետությունը չափելու համար (նման գնահատում նախատեսված է ծրագրի ավարտին):

Հետևաբար, 2023 թվականի մարտ-մայիս ժամանակահատվածում իրականացվել է ելակետային գնահատում, որի մեջ մտնում է մի շարք գործիքներ՝ առցանց հարցում, ֆոկուս խմբային քննարկումներ և հիմնական շահագրգիռ կողմերի անհատական հարցազրույցներ: Այս զեկույցը ներկայացնում է գնահատման արդյունքում բխող մեթոդաբանությունը, բացահայտումները, եզրակացությունները և առաջարկությունները:

Մեթոդաբանություն

Փաստաթղթի ուսումնասիրություն

Խորհրդատուն անցկացրեց փաստաթղթի ուսումնասիրություն, որը ներառում էր հետևյալ խնդիրները.

Գրականության ուսումնասիրություն

Գրականության ուսումնասիրության առաջնային նպատակն էր ստուգել Հայաստանում ՔՀԿ-ների վերաբերյալ նմանատիպ հարցումների առկայությունը, մասնավորապես՝ ուսումնասիրել հետազոտությունները, որոնք ներառում են արդեն իսկ հարցաքննած ՔՀԿ-ների ցանկը: Բացահայտվել են մի շարք հետազոտական աշխատանքներ, սակայն ոչ մեկն անմիջականորեն չէր առնչվում այս ելակետային գնահատման հետ:

IԲացի այդ, Բաց բյուջեների հետազոտության և միջազգային լավագույն փորձի հետ կապված, հայտնաբերվել են այնպիսի ռեսուրսներ, ինչպիսին է ՏՀԶԿ-ի բյուջետավորման թափանցիկության գործիքակազմը:

Պետական մարմինների կայքերի ուսումնասիրություն

Խորհրդատուն ուսումնասիրել է համապատասխան պետական մարմինների (այն չորս ոլորտների համար պատասխանատու նախարարությունները, որոնց վրա կենտրոնացած է այս ծրագիրը, նաև Ֆինանսների նախարարությունը, Ազգային ժողովը և Հաշվեքննիչ պալատը) կայքերը՝ բացահայտելու պետական բյուջեների վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը, ներառյալ հանրային քննարկումների բյուջեի նախագծերի քննարկման վերաբերյալ:

Քննարկումներ ՏԶՀԿ ներկայացուցիչների հետ

Պետական բյուջեի գործընթացի վերաբերյալ հիմնական տեղեկատվություն ստանալու համար, խորհրդատուն հարցազրույց է անցկացրել ՏԶՀԿ փորձագետների հետ, որպեսզի կարողանա տեղին հարցեր տալ քաղաքացիական հասարակությանը, անկախ փորձագետներին և պետական մարմնի շահագրգիռ կողմերին:

Մեթոդաբանական փաստաթղթերի կազմում

Խորհրդատուն կազմել է հետևյալ փաստաթղթերը.

ՔՀԿ-ների ցուցակ

ՔՀԿ-ների ցանկը կազմվել է հետևյալ աղբյուրների վրա հիմնվելով.

1. Կրթության ոլորտ.
    - Հայկական կրթական ցանց (ՔՀԿ կոալիցիա) (http://armedunet.com/members/)
2. Գյուղատնտեսության ոլորտ.
    - Հայաստանի գյուղատնտեսական դաշինք (https://ccd.armla.am/16157.html)
    - Հայկական բիզնես կոալիցիա (https://ccd.armla.am/9735.html)
3. Արդարադատության ոլորտ.
    - Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա (https://aac.am/)
    - «Juremonia» հարթակ (https://juremonia.am/հարթակ/)
    - Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա (https://coalitionagainstviolence.org/hy/)
4. Սոցիալական ոլորտ.
    - Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիա (https://ccd.armla.am/16157.html)
    - Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա (https://coalition.am/)

- «Վիններթ Արմենիա» Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանց
- Երեխաների պաշտպանության ցանց (http://armeniachildprotection.org/)

5. Բազմաոլորտային.
    - Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորում Հայաստանի ազգային պլատֆորմ (ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ) (https://eap-csf.am/hy/our-members/hap-andamneri-cucak/),
    - Հանրային խորհուրդ (https://publiccouncil.am/)
    - ԵՄ-Հայաստան Քաղաքացիական հասարակության պլատֆորմ (https://www.eesc.europa.eu/en/sections-other-bodies/other/eu-armenia-civil-society-platform/organisation)

Բացի այդ, ծրագրի կոնսորցիումի անդամները տվել են իրենց առաջարկությունները, իսկ «Մարդ կարիքի մեջ» Հայաստանյան գրասենյակը տրամադրել է Սյունիքում գործող ՔՀԿ-ների ցուցակը:

Ցուցակներն օգտագործվել են ՔՀԿ-ների հարցաշարը տարածելու և ՔՀԿ-ներին ՖԽՔ-ի հրավեր ուղարկելու նպատակով:

ՔՀԿ հարցաթերթ

Խորհրդատուն մշակեց ստանդարտ հարցաշար՝ բաժանելու և ՔՀԿ-ների կողմից լրացնելու նպատակով: Հարցաթերթիկում փորձ է արվել լուսաբանել պետական բյուջեներում ՔՀԿ-ների մասնակցության, մոնիտորինգի և շահերի պաշտպանության, ինչպես նաև կարողությունների զարգացման փորձի և կարիքների հետ կապված բոլոր հիմնական խնդիրները:

Հարցաշարի նախագիծը վերանայվել է կոնսորցիումի անդամների և EUD-ի կողմից, և վերջինիս առաջարկությամբ օգտագործվել է Google Forms առցանց գործիքը՝ հարցաթերթիկը լրացնելու և պատասխանները համադրելու գործընթացը հեշտացնելու համար: Արդյունքում, սկզբնական նախագծի որոշ հարցեր կիսվեցին, որպեսզի համապատասխանեն Google Forms-ի պահանջվող ձևաչափին: Հարցաթերթիկը կցված է՝ որպես Հավելված 3, իսկ առցանց հղումը՝ այստեղ:

Հարցաթերթիկ ՖԽՔ-ների համար

Ֆոկուս խմբային քննարկումները ստանդարտ ձևաչափով ապահովելու համար կազմվել է հարցաթերթիկ և վերանայվել է կոնսորցիումի անդամների և ԵՄՊ-ի կողմից: Վերջնական տարբերակը կցված է՝ որպես Հավելված 5:

Հարցաթերթիկ՝ փորձագետների ֆ պետության ներկայացուցիչների հետ հարցազրույցների համար

Փորձագետների և պետական ներկայացուցիչների հետ հարցազրույցները ստանդարտ ձևաչափով ապահովելու համար, կազմվել է հարցերաթերթիկ և վերանայվել կոնսորցիումի անդամների և ԵՄՊ-ի կողմից: Վերջնական տարբերակը կցված է՝ որպես Հավելված 6:

Համաձայն ՏԱ-ի՝ խորհրդատուից պահանջվել է հարցազրույց անցկացնել առնվազն 10 անկախ փորձագետների, ինչպես նաև հետևյալ պետական մարմինների ներկայացուցիչների հետ.

- Ֆինանսների նախարարություն
- Էկոնոմիկայի նախարարություն (գյուղատնտեսության ոլորտ)
- Արդարադատության նախարարություն
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (սոցիալական ոլորտ)
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (կրթության ոլորտ)
- Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ (համապատասխան ոլորտների երկու մշտական հանձնաժողովների ներկայացուցիչներ),
- Վերաքննիչ հանձնաժողով

Կոնսորցիումի անդամները տրամադրել են անկախ փորձագետների ցուցակը, որը կցված է՝ որպես Հավելված 7:

Դաշտային աշխատանք

Հարցաթերթիկի թեստավորում

Հարցաթերթիկը ուղարկվել է երեք ՔՀԿ-ների Word փաստաթղթի ֆորմատով, որպեսզի լրացնեն, և պատասխանները ուսումնասիրվել են: Պատասխանողները նշեցին, որ ձևաթուղթը լրացնելիս խնդիրներ չեն ունեցել, և դա հաստատվեց նրանց պատասխանների ուսումնասիրությունը:

Հարցաթերթիկի տարածում

Հարցաթերթիկը բաշխումը կատարվել է ցուցակի բոլոր ընդգրկված ՔՀԿ-ներին նամակներ ուղարկվելով (հարցաթերթիկի էլեկտրոնային հղումով), ինչպես նաև Սյունիքի կազմակերպությունների ցանկում գտնվող ՔՀԿ-ներին, որոնք տրամադրել է PIN-ը: Ընթացքում ակնհայտ դարձավ, որ որոշ էլ. հասցեներ այլևս գործող չեն, և հեռախոսով հետևելիս պարզվեց, որ նաև սխալ կամ ոչ գործող հեռախոսահամարներով գրանցվածներ կային: Որոշ դեպքերում՝ համացանցային հետազոտությունների և ծանոթների միջոցով հնարավոր եղավ գտնել մի շարք ՔՀԿ-ների նորացված էլեկտրոնային հասցեներ և/կամ հեռախոսահամարներ:

Հարցաթերթիկը տարածվել է նաև Ֆեյսբուքում:

Հետազոտության ՏԱ-ն նախատեսել էր, որ հարցաթերթիկին կպատասխանեն 80-100 ՔՀԿ-ի ներկայացուցիչ: Սկզբում սա անիրատեսական էր թվում, բայց էլ-նամակների, հեռախոսազանգերի և հիշեցնող SMS-ների հետևողական աշխատանքի միջոցով, ի վերջո, եղավ 81 վավեր պատասխան: Այս գործում խորհրդատուն աշխատանքի է ընդունել նաև օգնական Էլեն Ադամյանին: Այնուամենայնիվ, հավակնոտ նպատակին հավատարիմ մնալու փորձում, վերլուծության վերջնական ավարտը հետաձգվեց, և վերջին պատասխանը ստացվեց մի փոքր ուշ՝ վերլուծության մեջ ներառվելու համար: Այսպիսով, վիճակագրական վերլուծությունը հիմնված է հարցման 80 լրացրած պատասխանների վրա:

Հարցազրույցների անցկացում

Հարցազրույցներ են անցկացվել.

- 11 անկախ փորձագետների հետ (10-ը ներկայացված ցանկից, նաև Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ներկայացուցիչ)
- Պետական մարմինների 7 ներկայացուցիչների հետ (Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավարի հետ հարցազրույցի շարունակական խնդրանքներն ապարդյուն են. անվերջ ձգձգումներից հետո մշտական հանձնաժողովի աշխատակիցը խոստացավ, որ գրավոր հարցերին կպատասխանեն մեկ օրվա ընթացքում, բայց հետո պահանջեց ևս մեկ ամիս):
- 2 դոնոր ներկայացուցիչների հետ

The list of interviews is attached as Annex 8.

Պետական մարմինների բյուջետային հայտերի հանրային քննարկումներին մասնակցությունը

Խորհրդատուն օգտվել է այն հանգամանքից, որ հետազոտության ժամանակահատվածը նախարարությունների կազմած տարեկան բյուջեի նախագծերը հրապարակելու և քննարկումներ անցկացնելու վերջնաժամկետները համընկան, և հետևաբար, բացի հարցազրույցներից մասնակցել է հետևյալ լսումներին.

- Մարտի 31-ին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցած հանրակրթության բյուջեի քննարկմանը
- Ապրիլի 4-ին տեղի ունեցած քննարկմանը ֆինանսների նախարարությունում
- Մարտի 29-ին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Պետական ֆինանսների կառավարման ծրագիր»-ի շրջանակներում տեղի ունեցած սոցիալական ոլորտի բյուջեի քննարկմանը:

Այս միջոցառումներին ներկա գտնվելը խորհրդատուին հնարավորություն տվեց գնահատելու ՔՀԿ-ների մասնակցության աստիճանը և քննարկումների որակը:

ՖԽՔ-ներ

Համաձայն ՏԱ-ի՝ անցկացվել է 8 ՖԽՔ, որից 4-ը Երևանում, իսկ Գյումրի, Վանաձոր, Գորիս և Կապան քաղաքներում անցկացվել է մեկական քննարկում: Երևանի ՖԽՔ-ներին հրավիրվող ՔՀԿ-ների ընտրությունը սկզբում կատարվել է պատահականության սկզբունքով, սակայն, որպեսզի ապահովվի ՖԽՔ-ներին պատշաժ մասնակցությունը, արձագանքման ցածր մակարդակի պատճառով հետագայում անհրաժեշտ է եղել համակարգված հրավիրել բոլոր ՔՀԿ-ներին, որոնք ունեին վավեր էլ. հասցեներ:

FGD-ի հաճախումների թերթիկները կցված են՝ որպես Հավելված 9:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է գնահատման ընթացքում շահագրգիռ կողմերի ընդհանուր ներգրավվածությունը.

ՔՀԿ հարցաթերթիկ	Վավեր պատասխանների քանակը՝ 81	Վիճակագրական վերլուծության մեջ ընդգրկված պատասխանների քանակը՝ 80
Շահագրգիռ կողմերի հետ անհատական հարցազրույցներ	Նախատեսված հարցազրույցների քանակը՝ 10 անկախ փորձագետ, 8 պետական մարմին, 2 դոնոր կազմակերպության ներկայացուցիչ	Անցկացված հարցազրույցների քանակը՝ ● 10 անկախ փորձագետ ● 7 պետական մարմնի ներկայացուցիչ ● 2 դոնոր կազմակերպության ներկայացուցիչ
Ֆոկուս խմբային քննարկումներ	Անցկացված ՖԽՔ-ների քանակը՝ 8 (4-ը Երևանում, 4-ը՝ մարզերում)	ՖԽՔ-ների մասնակիցների քանակը՝ 26
Բյուջետային հայտերի հանրային քննարկումների մասնակցությունը	ՏԱ-ում նախատեսված չէ	Մասնակցել է 3 նիստի՝ ՖՆ, ԿԳՄՍՆ, ԱՍՀՆ

Տվյալների վերլուծություն

Հարցման արդյունքների համապարփակ և ճշգրիտ վերլուծությունն ապահովելու համար ներգրավվել է սոցիոլոգ (Անուշ Շախսուվարյան). նրա վերլուծական հաշվետվությունը ներկայացված է՝ որպես Հավելված 10, իսկ պատասխանների մաքրված տվյալների բազան՝ որպես Հավելված 11:

Բացահայտումներ ֆ քննարկումներ

Այս բաժինը ներկայացնում է ՏԱ-ում ներկայացված հարցերն ու խնդիրները և հերթով պատասխանում է դրանց: Հարցերն ու առաջադրանքները համարակալվել են՝ ՏԱ-ում դրված հաջորդականությունից ելնելով, բայց հետո, մոտեցման տրամաբանության նպատակով, խմբավորվել են թեմատիկորեն:

Բյուջեի մասին տեղեկատվություն ֆ իրազեկում, մասնակցություն՝ քննարկումներին

ՏԱ 1-ին Հարց. Որքա՞ն (ի՞նչ համամասնությամբ) ՔՀԿ-ներ ունեն ՀՀ պետական կենտրոնական մարմինների (ՀՀ կառավարություն, նախարարություններ, անկախ և ինքավար մարմիններ, ԱԺ հանձնաժողովներ և այլն) և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային գործընթացում շահերի պաշտպանության իրականացման (ջատագովության) և հանրային քաղաքականությունների բարելավման փորձ և տեղեկատվություն

«Ձեր գործունեության ընթացքում, որքա՞ն հաճախ եք առնչվում պետական բյուջետային տեղեկատվությանը» հարցման ընթացքում այս հարցին պատասխանել են հետևյալ կերպ.



Այսպիսով, հարցումը լրացրած ՔՀԿ-ների կեսից պակասն է բավականին հաճախ ստանում բյուջեի մասին տեղեկատվություն: Ավելին, նրանցից շատերը բյուջեի մասին տեղեկատվություն են ստանում ոչ թե պետական մարմիններից, այլ ՏԻՄ-երից: Սա երևում է «Ի՞նչ առցանց աղբյուրներից եք օգտվում բյուջետային տեղեկատվություն հավաքագրելիս» հարցի պատասխաններից.



Ինչ վերաբերում է մոնիտորինգի գործողություններին, ապա հարցման պատասխանները ցույց են տալիս, որ ՔՀԿ-ների 20%-ը վերահսկել է բյուջեի կատարողականը, մինչդեռ 80%-ը երբեք բյուջեի նկատմամբ մոնիտորինգ չի իրականացրել:



ՖԽՔ-ներից պարզ է, որ մոնիտորինգ իրականացրածներից շատերը դա արել են ոչ թե ազգային, այլ ՏԻՄ մակարդակում: ճյուղային նախարարությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցները հաստատում են սա, քանզի նրանցից ոչ ոք տեղյակ չէր վերջին տարիներին ՔՀԿ-ների կողմից բյուջեի մոնիտորինգի մասին:

Ինչ վերաբերում է բյուջեների հայտերի վերլուծությանը, ապա համապատասխան մարմինների հետ քննարկումներին ՔՀԿ-ների մասնակցության տվյալները լավ վկայում են դրա մասին և ավելի մանրամասն ներկայացված են ՏԱ 5-րդ հարցի պատասխանում: Ամփոփելով, հարկ է նշել, որ քննարկումների մասնակցությունը ցածր է, որոշ դեպքերում, անգամ, ՔՀԿ-ներ ընդհանրապես չեն մասնակցել համապատասխան

նախարարություններում անցկացվող լսումներին (օրինակ՝ վերջին 2 տարվա ընթացքում Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված լսումներին ոչ ոք չի մասնակցել): Ավելին, այս տարի անցկացված երկու լսումներից (համապատասխանաբար ԿԳՄՍՆ-ի և ԱՍՀՆ-ի) կարելի է եզրակացնել, որ նախքան քննարկումներին մասնակցելը՝ ՔՀԿ-ները չեն ձեռնարկում բյուջեի հայտերի մանրամասն հետազոտություն: Համենայն դեպս, այդ լսումներին տրվող հարցերը հիմնականում շատ ընդհանուր բնույթի էին:

Ինչ վերաբերում է պարզեցված բյուջեներին, ապա, 2022 թվականին միայն մեկ ՔՀԿ է կազմել պարզեցված (քաղաքացու) բյուջեներ՝ ըստ առցանց հարցաթերթիկի արդյունքների: Ընդգրկված էին սոցիալական և կրթական ոլորտները: 2022 թվականին արդարադատության և գյուղատնտեսության ոլորտներում ՔՀԿ-ների կողմից պարզեցված (քաղաքացու) բյուջեներ չեն պատրաստվել:



ՖԽՔ-ները հաստատեցին սա, քանզի մասնակից ՔՀԿ-ներից ոչ մեկ չէր պատրաստել պարզեցված (քաղաքացու) բյուջե, և շատերը նույնիսկ տեղյակ չէին դրանց գոյության մասին: Ըստ առցանց հարցաթերթիկի արդյունքների՝ նախորդ տարիներին մի քանի ՔՀԿ-ներ ներգրավվել են պարզեցված (քաղաքացու) բյուջեների կազմման մեջ, հիմնականում ՏԻՄ-երի ոլորտում:

ՖԽՔ-ների տվյալները ցույց են տալիս պետական բյուջեի գործընթացի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակ, և մասնակիցներից միայն մեկն է իրականացրել պետական բյուջեի մոնիտորինգ, այն էլ՝ ավելի քան 10 տարի առաջ: Մյուսները նշեցին, որ կարծում են, որ ՏԻ-ն և ՏՁՀԿ-ն մշտադիտարկում են իրականացրել, մինչդեռ անկախ փորձագետների հետ հարցազրույցների ժամանակ նշվել է Iravaban.net-ի և «Հետքի» կողմից պետական բյուջեի ծախսերի մեդիա մոնիտորինգը: Նախարարությունների

ներկայացուցիչներից ոչ մեկ տեղյակ չէր վերջին 2 տարվա ընթացքում ՔՀԿ-ների կողմից իրականացված որևէ մոնիտորինգի կամ շահերի պաշտպանության մասին:

ՏԱ 5-րդ հարց. Որքա՞ն (ի՞նչ համամասնությամբ) ՔՀԿ-ներ են կանոնավոր կերպով մասնակցում ՀՀ պետական կենտրոնական մարմինների (ՀՀ կառավարություն, նախարարություններ, անկախ և ինքավար մարմիններ, ԱԺ հանձնաժողովներ և այլն) և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային հայտերի, բյուջեների նախագծերի քննարկումներին:

Թեև հարցման ընթացքում լրացնողների 32.5%-ը նշել է, որ ժամանակին մասնակցել է պետական մարմինների հետ բյուջետային հայտերի հանրային քննարկումներին, իրականում այս ցուցանիշը ապակողմնորոշիչ է մի շարք պատճառներով: Նախ՝ շատ դեպքերում մասնակցությունը եղել է 2021 թվականին կամ ավելի վաղ, և երկրորդ՝ պատասխաններից երևում է, որ որոշ դեպքերում քննարկումները եղել են ոչ թե պետական մարմինների, այլ ՏԻՄ-ների հետ: Եվ վերջապես, շատ քիչ քանակի ՔՀԿ-ներ են *պարբերաբար* մասնակցում պետական մարմինների հետ բյուջետային հայտերի հանրային քննարկումներին. հարցման մասնակիցներից միայն հինգն են նշել, որ մասնակցել են քննարկումներին և՛ 2022 թվականին, և՛ նախորդ տարիներին: Եվս 8 ՔՀԿ ասել են, որ մասնակցել են քննարկումներին 2021 թվականին կամ ավելի վաղ, բայց ոչ դրանից հետո:



`

Քննարկումները հիմնականում եղել են ԱՍՀՆ-ի և ԿԳՄՍՆ-ի հետ; միայն երկու ՔՀԿ-ներ են ասել, որ քննարկումներ են ունեցել Հաշվեքննիչ պալատի հետ (և ոչ մի քննարկում 2021 թվականից ի վեր): Յոթն ասացին, որ մասնակցել են Ազգային ժողովի քննարկումներին, բայց միայն երկու դեպքում էր սա 2021 թվականից հետո:

ՔՀԿ-ներն ավելի շատ մասնակցել են ՏԻՄ մակարդակում. ըստ հարցաշարի՝ նրանցից 11-ն են մասնակցել, թեև միայն մեկ լրացնող է կոնկրետ նշել, որ վերջին երկու տարիներին բյուջետային հայտերի հանրային քննարկումներ է ունեցել ՏԻՄ-երի հետ:

ՖԽՔ-ները ավելի բարձր մակարդակի ներգրավվածության ցույց տվեցին ՏԻՄ-երի հետ. մասնակիցներից 7-ն ասացին, որ քննարկել են ՏԻՄ բյուջեները վերջին տարիների ընթացքում: Անկախ փորձագետները նաև հայտնաբերել են տեղական մակարդակում ակտիվ մի քանի ՀԿ-ներ, ինչպիսիք են ՀԿ Կենտրոնը (Վանաձոր), Արմավիրի զարգացման կենտրոնը և Համայնքային համախմբման և աջակցության կենտրոնը (Ալավերդի):

ՏԱ 4-րդ հարց. Որո՞նք են բյուջետային գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության և շահերի պաշտպանության իրականացման հիմնական բացերն ու խոչընդոտները:

Հարցման պատասխանները հետևյալն էին.



«Այլ» բաժնի մեկնաբանությունների մեծ մասը երկու թեմայի շուրջ էր կենտրոնացված՝ առաջարկությունների ընդունման ցածր ակնկալիքների և մարդկային ու ֆինանսական ռեսուրսների պակասի:

Բացի այդ, անկախ փորձագետներից մեկը պետբյուջեի նախագծի վերաբերյալ նկատեց տեղեկատվության պակաս, և նշեց, որ կարևորագույն ինֆորմացիան չի հրապարակվում, հետևաբար կա իրազեկվածության պակաս: Հետևաբար, սա քննարկումների բացակայության պատճառներից մեկն է:

ՖԽՔ-ներին հիմնականում կրկնվում էին նույն թեմաները. բյուջեն վերլուծելու համար ժամանակի և ռեսուրսների պակաս, բյուջետային հայտերի հանրային քննարկումների մասին տեղյակ չլինելը, բյուջեի պարզեցված (քաղաքացու) նախագծի բացակայությունը: Մասնակիցներից մեկը պնդում էր, որ բյուջետային հայտերի հանրային քննարկումները ՀԿ-ների համար առաջնահերթություն չեն, քանի որ պարզ չէ, թե ինչ կարող են նրանք շահել քննարկումների մասնակցությունից. եթե կարևոր է՝ նրանք կգտնեն ժամանակ և ռեսուրսներ:

Շահերի պաշտպանություն

ՏԱ 6-րդ Հարց. Որքա՞ն (ի՞նչ համամասնությամբ) ՔՀԿ-ներ ունեն ՀՀ պետական կենտրոնական մարմինների (ՀՀ կառավարություն, նախարարություններ, անկախ և ինքավար մարմիններ, ԱԺ հանձնաժողովներ և այլն) և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային գործընթացում շահերի պաշտպանության իրականացման (ջատագովության) և հանրային քաղաքականությունների բարելավման փորձ և տեղեկատվություն:



Ինչպես երևում է վերը նշված պատկերից, հետազոտության արդյունքները բավականին դրական են: «Ձեր կազմակերպությունը երբևէ իրականացրե՞լ է ջատագովություն՝ պետական բյուջեում բարելավումներ կատարելու նպատակով» հարցին 37.5%-ը դրական է պատասխանել: Այնուամենայնիվ, լրացնողների կողմից տրված բացատրություններից պարզ է դառնում, որ նրանցից առնվազն 6-ը շահերի պաշտպանություն են իրականացրել միայն ՏԻՄ բյուջեների վերաբերյալ, մինչդեռ ևս մի քանի լրացնողների պատասխանները ցույց են տալիս, որ նրանք իրականացրել են ընդհանուր շահերի պաշտպանություն, այլ ոչ թե հատկապես բյուջեի հետ կապված: Ընդհանուր առմամբ, ընդամենը 8 լրացնող է նշել, որ վերջին 2 տարում ջատագովություն է իրականացրել:

ՖԽՔ-ներից, փորձագետների և պետական ներկայացուցիչների հարցազրույցներից հավաքած տվյալները շատ պարզ էին. ոչ ոք տեղյակ չէր պետական բյուջեի վերաբերյալ վերջին ջատագովության արշավների մասին, մինչդեռ ՏԻՄ-ների հետ ներգրավվածությունն ավելի լայն էր:

ՏԱ 9-րդ հարց. Որո՞նք են բյուջետային գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության և շահերի պաշտպանության հիմնական բացերը և խոչընդոտները:

Ինչ վերաբերում է բյուջետային գործընթացում շահերի պաշտպանությանը, ապա հետազոտության արդյունքները հետևյալն են.



ՖԽՔ-ների և հարցազրույցների ստացված արդյունքները հաստատում են, որ հիմնական խոչընդոտները հմտությունների և ռեսուրսների պակասն են, ինչպես նաև կասկածները, որ դրական արդյունքի չի հանգի: Այնուամենայնիվ, երբեմն բացառություններ էլ են եղել: ՖԽՔ-ների մասնակիցներից մեկը, ով գյուղատնտեսության ոլորտից էր, շատ դրական վերաբերմունք ուներ պետական քաղաքականության վրա ազդելու կարողության հանդեպ, նշելով, որ խնդիրը բարձրաձայնելիս «մեսիջը տեղ հասցնելու» բանալին նախարարների խորհրդականների հետ զրուցելն է: Անկախ փորձագետները նշեցին հմտությունների պակասը, և նաև մտահոգություն հայտնեցին, որ որոշ ՔՀԿ-ներ իրականում չեն զբաղվում շահերի պաշտպանությամբ, այլ ավելի շատ իրենց համար ռեսուրսներ են լոբբինգ անում: Սա կարող է լինել ֆինանսավորման համար մրցակցության և ՔՀԿ-ների կողմից ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման բացակայության հետևանքը:

Ինչ վերաբերում է բյուջեների մոնիտորինգին և վերլուծությանը մասնակցությանը, խնդրում ենք տե՛ս վերը նշված ՏԱ 4-րդ հարցի պատասխանը:

Կարողությունների զարգացման կարիքները

ՏԱ 3-րդ հարց. Ի՞նչ կարողություններ կցանկանան բարելավել ՔՀԿ-ները, որպեսզի կարողանան իրականացնել բյուջետային հայտերի և բյուջեների մշտադիտարկում ու վերլուծություն, այդ թվում պարզեցված բյուջերի կազմում:

Հարցման պատասխանները հետևյալն էին.



Լրացնողների կողմից արված լրացուցիչ առաջարկների մեջ էին մտնում ռազմավարական մշակումը, կոալիցիաների ձևավորումը, պետական մարմինների հետ կառուցողական երկխոսությունը, փաստերի վրա հիմնված քաղաքականության վերլուծությունը և նման խնդիրներ:

ՖԽՔ-ներին հնչեցրած առաջարկությունները հաստատեցին վերլուծական հմտությունների, ինչպես նաև մոնիտորինգի և ջատագովության հմտությունների անհրաժեշտությունը: Անկախ փորձագետները և պետական ներկայացուցիչները հաստատեցին, որ ՔՀԿ-ներին անհրաժեշտ է բյուջեի վերլուծության հմտություններ, նաև մոնիտորինգի և շահերի պաշտպանության հմտությունների բարելավումը, որպեսզի տեղյակ լինեն տվյալների աղբյուրներից և մոնիտորինգի ենթարկելու որոշակի ոլորտների և/կամ բյուջետային գործընթացի ասպեկտների հնարավորություններից:

Հարցումը նաև հետաքրքրվել է շահերի պաշտպանության հմտություններով, և լրացնողները նշել են, որ իրենց անհրաժեշտ են հետևյալ հմտությունները.



ՏԱ 8-րդ հարց. Ի՞նչ կարողություններ կցանկանան բարելավել ՔՀԿ-ները, որպեսզի կարողանան իրականացնել բյուջետային հայտերի և բյուջեների մշտադիտարկում ու վերլուծություն, այդ թվում պարզեցված բյուջերի կազմում:

Խնդրում ենք տե՛ս վերը նշված ՏԱ 3-րդ հարցի պատասխանները:

ՏԱ առաջադրանք 10. Ուսումնասիրել և գնահատել ՔՀԿ-ների հարակից այլ կարիքները, կարողությունները, բացերն ու խնդիրները:

Հարցման արդյունքների վերլուծությունը ընդգծում է մի շարք ավելի ընդհանրական խնդիրներ, որոնք բնորոշ են ՔՀԿ ոլորտին.

- ՔՀԿ-ները շատ հազվագյուտ են ունենում երիտասարդ առաջնորդներ: Հարցմանը պատասխանողները հիմնականում կա՛մ 50 և ավելի էին (45%), կա՛մ էլ՝ 40-49 (37.5%): 18-29 տարեկանները ընդամենը 6,3% էին կազմում:



- Բազմաթիվ ՔՀԿ-ներ չունեն աշխատաակազմ. հարցման մասնակիցների դեպքում՝ 28,75%-ը: Ակնհայտ է, որ եթե վերցնենք ՔՀԿ ոլորտն ամբողջությամբ, ապա այս ցուցանիշն ավելի ցածր կլինի, քանի որ մեկից ավելի ներկայացուցիչ ունեցող ակտիվ ՔՀԿ-ները ավելի հավանական է, որ ժամանակ և ռեսուրսներ ունենային հարցմանը պատասխանելու համար:



- Հաճախ, զգալի քանակությամբ աշխատակազմով ՔՀԿ-ներն այն են, որոնց հասանելի է զգալի և/կամ մշտական դոնորների ֆինանսավորումը (օրինակ՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ)

Այս վերջին կետը հիշեցնում է այն փաստը, որ ՔՀԿ-ները շարունակում են մեծ մասամբ կախված լինել դոնորների ֆինանսավորումից, և ֆինանսական կայունության բացակայությունից, հաճախ նրանք չեն ունենում ռեսուրսներ՝ իրենց հիմնական խնդիրների վրա ամեն տարի կենտրոնանալու համար: Փոխարենը՝ կա՛մ անգործության շրջաններ են ունենում, կա՛մ պարբերաբար փոխում են իրենց ֆոկուսը՝ դոնորների ֆինանսավորմանը ձգտելով: Երկու դեպքում էլ նրանք շեղվում են բուն նպատակից՝ որոշ շահագրգիռ կողմերի խմբի կամ քաղաքականության բարեփոխման հետևողականորեն ներկայացնելուց կամ պաշտպանելուց:

Փորձագետների հարցազրույցները և ՖԽՔ-ները նաև ընդգծեցին ՔՀԿ ոլորտի այլ թույլ կողմեր: Թեև խոշոր ՔՀԿ-ների մեծ մասն ամբողջությամբ ունի կառավարման հմտություններ, սակայն ավելի փոքր ՔՀԿ-ներից շատերը դժվարանում են արդյունավետ գործել, քանի որ չունեն հետևյալ հմտությունները.

- Շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ. ակնհայտ է, որ պետական և ՏԻՄ գործընկերների հետ անարդյունավետ հաղորդակցելուց բացի, նաև դժվարանում են շահառուների հետ շփման իրենց կարիքները հասկանալու մեջ:
- Ռազմավարական զարգացում. այս հմտությունը պետքական է և՛ քաղաքականության ոլորտում, հետևաբար, կարող է օգտակար լինել ոլորտային ռազմավարությունները համապատասխան ճյուղային նախարարության կամ ՏԻՄ-ի հետ քննարկելիս, և՛ որպես ներքին գործիք՝ օգնելու ՔՀԿ-ին՝ նպատակների

վրա կենտրոնանալու և աճման կարիքները հասկանալու (ներառյալ ինքնագնահատման հմտությունները): Ֆիննսների հայթայթման հմտությունների և ֆինանսավորման ռեսուրսների դիվերսիֆիկացման հետ մեկտեղ ռազմավարական զարգացման հմտությունը կարող է օգնել ՔՀԿ-ներին կենտրոնացած մնալ իրենց հիմնական առաքելության վրա և այդպիսով դառնալ ավելի լավ զարգացման գործընկերներ:

Ի լրումն, ՖԽՔ-ների և անհատական հարցազրույցների ժամանակ պարզ դարձավ, որ ՔՀԿ կոալիցիաները կարող են արդյունավետ լինել ոչ միայն ռեսուրսների համախմբման, այլ նաև պետական գործընկերների հետ երկխոսության ընթացքում միասնական պատկեր ներկայացնելու հարցում: Նման մոտեցումից հատկապես շահում են ավելի փոքր և թույլ ՔՀԿ-ները, սակայն կարևոր է, որ ավելի հզոր ՔՀԿ-ները չփորձեն միայնակ գործել, այլ ղեկավարի դերում գտնվեն կոալիցիաներում և ցանցերում:

ՏԱ 11-րդ առաջադրանք. ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ պատկերացումներ տրամադրել՝ ծրագրին տեղեկացնելու առկա բացերի և խնդիրների մասին, որոնց վրա պետք է կենտրոնանալ ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված միջամտություններ մշակելիս

Այս խնդիրը քննարկվում է առաջարկություններում (տես ստորև)

Վերապատրաստում

ՏԱ 2-րդ հարց. Որքա՞ն (ի՞նչ համամասնությամբ) ՔՀԿ-ներ են կանոնավոր կերպով մասնագիտական վերապատրաստում անցել բյուջետային հայտերի, բյուջեների մշտադիտարկման ու վերլուծության, այդ թվում պարզեցված բյուջեի կազմման թեմաներով

Հարցման «Ձեր կազմակերպությունը երբևէ մասնակցե՞լ է բյուջետային գրագիտության դասընթացին» հարցի պատասխանները հետևյալն էին.



Ինչպես երևում է, ՔՀԿ-ների մեծ մասը բացասական պատասխան է տվել. օրինակ՝ 65%-ն նշել է, որ երբեք չի մասնակցել բյուջետային տեղեկատվության աղբյուրներից օգտվելու և օգտագործելու դասընթացներին: Նրանք, ովքեր մասնակցել են դասընթացներին, շատ դեպքերում դա տեղի է ունեցել 2021 թվականին կամ ավելի վաղ: Վերջին վերապատրաստումների մեծ մասն իրականացվել է ՏԶՀԿ-ի կողմից:

ՖԽՔ-ներից և անկախ փորձագետների հետ հարցազրույցներից հավաքած տվյալները նույնպես հաստատեցին, որ վերապատրաստումը հաճախակի չի իրականացվում: ՖԽՔ-ների մասնակիցներից ոչ ոք չասաց, որ մասնակցել է որևէ վերապատրաստման անցած տարվա ընթացքում, իսկ անկախ փորձագետների մեծ մասը տեղյակ չէր վերջերս անցկացրած վերապատրաստումների մասին: Պետության ներկայացուցիչները նույնպես տեղյակ չէին ՔՀԿ-ների համար անցկացված որևէ վերապատրաստման մասին:

ՏԱ 7-րդ հարց. Որքա՞ն (ի՞նչ համամասնությամբ) ՔՀԿ-ներ են կանոնավոր կերպով մասնագիտական վերապատրաստում անցել մասնակցային բյուջետավորման, բյուջետային հայտերի նախագծերի կազմման, ինչպես նաև բյուջետային գործընթացում շահերի պաշտպանության (ջատագովության) իրականացման և հանրային քաղաքականությունների բարելավման թեմաներով

Հարցման «Ձեր կազմակերպությունը մասնակցե՞լ է բյուջետային գրագիտության դասընթացների» հարցը ունեցել է հետևյալ արձագանքը.



Ըստ վերոնշյալի՝ հարցման ընթացքում ՔՀԿ-ներից 22-ը նշել են, որ անցել են վերապատրաստում՝ պետական բյուջեի գործընթացում շահերի պաշտպանության վերաբերյալ, իսկ 29-ը՝ շահերի պաշտպանություն (ջատագովություն) պետական բյուջեում բարելավելումներ կատարելու նպատակով վերապատրաստում: Այնուամենայնիվ, շատ դեպքերում դասընթացը տեղի է ունեցել 2021 թվականին կամ ավելի վաղ, և շատ քիչ ՔՀԿ-ներ են վերապատրաստվել մեկից ավելի անգամ: Ուստի, «կանոնավոր» վերապատրաստում անցածների թիվը նվազագույն է: ՖԽՔ-ներից և հարցազրույցներից ստացված արձագանքները հաստատվում են. շահագրգիռ կողմերից ոչ մեկը չվկայակոչեց կանոնավոր վերապատրաստման դեպքերի մասին: Երևում է, որ եղել են «մեկանգամյա» դասընթացներ, բայց կայուն, հետևողական ջանքեր մի քանի տարիների ընթացքում չեն եղել:

Ելակետային տվյալներ

ՏԱ 12-րդ առաջադրանք. ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ տրամադրել ելակետային տվյալներ, որոնք կարող են օգտագործվել ծրագրի արդյունավետությունը չափելու համար (նախատեսվում է նմանատիպ գնահատում անցկացնել նաև ծրագրի իրականացման ավարտին)

ՏԱ 13-18-րդ առաջադրանքներում ստորև ներկայացված են ելակետային տվյալների մանրամասն պահանջները, և համապատասխան պատասխանները հերթով տրվում են:

ՏԱ 13-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում բյուջետային գործընթացների վերաբերյալ արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում գործող ՔՀԿ-ների վերապատրաստման ծրագրերի առկայությունը, դրանց թիվը և կարգավիճակը, ներառյալ՝ մոդուլները, առցանց ուսուցումները և վիզուալիզացիայի գործիքները

Ընդհանուր առմամբ, հարցման մասնակիցներից 12-ը նշեցին, որ մասնակցել են 2022 թվականի բյուջետային գործընթացների վերաբերյալ վերապատրաստման ծրագրերին. Նրանցից մեկը նշեց, որ ՏԶՀԿ-ն է իրականացրել վերապատրաստումը, իսկ մեկ ուրիշը՝ Արմավիրի զարգացման կենտրոնը, նշեց, որ հենց իրենք են իրականացրել:

Փորձագետների հարցազրույցների ժամանակ Մովսես Արիստակեսյանը նշել է, որ նա (Սուսաննա Եղիազարյանի հետ մեկ տեղ) կազմել է բյուջետային ցուցանիշների ՔՀԿ-ների մշտադիտարկման հայեցակարգ և բյուջետային գործընթացը բացատրող ձեռնարկ: Հնարավոր է, որ այս նյութերը դեռ հասանելի են:

ՖԽՔ մասնակիցներից կամ պետության ներկայացուցիչներից ոչ ոք չի անդրադարձել կոնկրետ վերապատրաստման ծրագրի:

ՏԱ 14-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում գործող ՔՀԿ-ների ներկայացուցիչների թիվը, որոնք ունեն հանրային (պետական) բյուջեների վերլուծության և մոնիթորինգի, մասնակցության և շահերի պաշտպանության բարձր հմտություններ: Այս տվյալները հարկավոր է ներկայացնել ըստ հետևյալ թիրախային խմբերի՝ կին, տղամարդ, երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, գտնվելու (գործունեության) վայր

Վերապատրաստում անցնելու, կամ ոլորտում ակտիվ լինելու, քննարկումների, մոնիտորինգի և վերապատրաստման միջոցով ներգրավված լինելու շնորհիվ, հմտություններ ունեցող ՔՀԿ-ների մասին պատկերացում կազմելու համար որոշվել է վերլուծել հետևյալ հարցերի համակցված պատասխանները.

- ՔՀԿ-ն մասնակցե՞լ է բյուջետային հայտերի հանրային քննարկումներին: (հարցման 18-րդ հարց)
- ՔՀԿ-ն իրականացրե՞լ է բյուջեի մշտադիտարկում: (հարցման 19-րդ)
- ՔՀԿ-ն ձեռնարկե՞լ է բյուջեի նկատմամբ շահերի պաշտպանություն: (հարցման 22-րդ հարց)
- Արդյո՞ք ՔՀԿ-ն մասնակցել է բյուջետային վերապատրաստման դասընթացներին: (հարցման 23-րդ հարց)

Ըստ վերոնշյալի վերլուծության՝ ՔՀԿ-ներից 10-ը դրական են արձագանքել *և՛* բյուջեի քննարկումների մասնակցությանը, *և՛* մոնիտորինգի իրականացմանը: ՔՀԿ-ներից 8-ը *և* մասնակցել են բյուջեի քննարկումներին *և* վերահսկել բյուջեն ու ջատագովել: ՔՀԿ-ներից 6-ը կատարել են վերը նշված բոլոր կետերը *և* մասնակցել վերապատրաստմանը:

Վերոնշյալ արդյունքներից և անձնակազմի առկայության վերաբերյալ պատասխաններից նաև համադրվել են: Այն թիվ 10 ՔՀԿ-ներից 5-ը հայտնել են, որ ներկայումս ընդհանրապես աշխատակազմ չունեն: Այսպիսով, կարելի է ասել, որ կա 5 ՔՀԿ՝ այս ոլորտին համապատասխան հմտություններով և կարողություններով:

Թեև իմաստ չկա այդքան փոքր թվով ՔՀԿ-ների վիճակագրական վերլուծություն իրականացնելը, սակայն հատկանշական է, որ այդ 5 ՔՀԿ-ներից 4-ը գլխավորում են կանայք, իսկ 2-ը գտնվում են Երևանից դուրս:

ՏԱ 15-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում պարզեցված բյուջեների քանակը, որոնք պատրաստվել են ՔՀԿ-ների կողմից

ՔՀԿ-ների ընդհանուր ներգրավվածությունը՝ պարզեցված բյուջեներ կազմելու, քննարկվում է ՏԱ 1-ին հարցում, որի գծապատկերը ցույց է տալիս, որ 2022 թվականին է եղել նվազագույն ներգրավվածությունը: Իրականում, հետազոտության արդյունքները վերլուծելիս, ակնհայտ է դառնում, որ միայն մեկ ՔՀԿ է 2022 թվականին պատրաստել պարզեցված բյուջեներ: Ընդգրկվել են սոցիալական և կրթական ոլորտները: 2022 թվականին արդարադատության և գյուղատնտեսության ոլորտներում ՔՀԿ-ների կողմից պարզեցված բյուջեներ չեն պատրաստվել: Դա հաստատում են ՖԽՔ-ները, որոնցում ոչ մի ՔՀԿ չէր պատրաստել պարզեցված բյուջե, և շատերը նույնիսկ տեղյակ չէին դրանց գոյության մասին:

ՏԱ 16-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում մոնիթորինգի ենթարկված բյուջետային ծրագրերի քանակը և առաջիկա տարիների ծրագրերի համար արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում գործող ՔՀԿ-ների կողմից մշակված առաջարկությունները

Հարցման պատասխանները ցույց տվեցին, որ, ընդհանուր առմամբ, լրացնողներից 18-ն (21%) են մոնիտորինգ իրականացրել, սակայն պարզ չէր, 2022 թվականին իրականացվել էր որևէ մոնիտորինգ թե ոչ: Այդ 18 լրացնողներից միայն 5-ն են հայտնել, որ իրենց առաջարկությունները ընդունվել էին պետական մարմինների կողմից: Այդ մշտադիտարկումները հետևյալն են.

- Մեկը վերաբերում էր պետական գնումներին և իրականացվել էր 2021թ
- Երկուսը վերաբերում էին զբաղվածության ծրագրերին, որոնցից մեկն անցկացվել է 2017թ
- Մեկն արդարադատության ոլորտում էր և վերաբերում էր աշխատանքային վեճերի լուծմանը
- ՔՀԿ-ներից մեկը պարզապես նշել է գյուղատնտեսության, սոցիալական և առողջապահական ոլորտները՝ առանց այլ մանրամասների

- ՔՀԿ-ներից մեկը նշեց, որ մոնիտորինգը եղել է ՏԻՄ-ի ոլորտում

ՖԽՔ-ների մասնակիցներից ոչ ոք պետական բյուջեի որևէ ոլորտի մոնիտորինգ չի իրականացրել 2022 թվականին, և անկախ փորձագետները նույնպես չեն տեղեկացվել մշտադիտարկման որևէ հաջողված փորձի մասին: Այնուամենայնիվ, փորձագետներից մեկը նշեց, որ ԿԳՄՍՆ-ն հանձնարարել էր բյուջեի կատարողականի վերանայում, և դա մրցույթով տրվել է ՀԿ-ին:

ՏԱ 17-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում գործող ՔՀԿ-ների իրազեկվածության մակարդակը՝ բյուջեների, բյուջետային գործընթացների, մասնակցության և ֆինանսների թափանցիկության լավագույն փորձի վերաբերյալ

ՔՀԿ-ների իրազեկվածության ընդհանուր մակարդակը գնահատվում է բավականին ցածր՝ մի շարք դեպքերում.

- Բյուջեների նախագծերի քննարկումներին մասնակցության ցածր մակարդակը
- Այն փաստը, որ մի շարք ՔՀԿ-ներ (ինչպես վկայում են ՖԽՔ-ները) տեղյակ չեն բյուջեի նախագծերի ճյուղային նախարարությունների հետ քննարկման ժամանակացույցից և մասնակցել են միայն ՏԻՄ մակարդակում
- Պարզեցված բյուջեների մասին իրազեկվածության ցածր մակարդակը և այն, որ հարցմանը մասնակցած ՔՀԿ-ներից միայն մեկն է պատրաստել պարզեցված բյուջե 2022թ.
- Բազմաթիվ ՔՀԿ-ների գիտակցումը, որ նրանք չունեն ո՛չ ժամանակ, ո՛չ էլ մարդկային կամ ֆինանսական ռեսուրսներ բյուջեի վերլուծություն կատարելու համար (ըստ առցանց հարցաթերթիկի և ՖԽՔ-ների արդյունքների):

ՏԱ 18-րդ առաջադրանք. 2022 թվականի ընթացքում արդարադատության, սոցիալական ապահովության, կրթության և գյուղատնտեսության ոլորտներում գործող ՔՀԿ-ների ներկայացուցիչների թիվը, որոնք ունեն հանրային (պետական) բյուջեների վերլուծության և մոնիթորինգի, մասնակցության և շահերի պաշտպանության բարձր հմտություններ: Այս տվյալները հարկավոր է ներկայացնել ըստ հետևյալ թիրախային խմբերի՝ կին, տղամարդ, երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, գտնվելու (գործունեության) վայր:

Հարցմանն ընդամենը ՔՀԿ-ներից 5-ն են նշել, որ շահերի պաշտպանության արշավներ են իրականացրել 2022 թվականին, հետևաբար, վիճակագրորեն ապակողմնորոշիչ կլինի վերլուծել այս ցածր ցուցանիշը թիրախային խմբերի բաշխվածության առումով:

Եզրակացություններ ֆ առաջարկություններ

Այս բաժինը սկսվում է յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ եզրակացություններով, այնուհետև ցուցակվում են առաջարկություններ հիմնական լսարանների՝ ծրագրի, ՔՀԿ-ների և Կառավարության/պետական մարմինների համար:

Եզրակացություններ

Իրազեկվածություն և մասնակցություն

ՔՀԿ-ների մասնակցությունը բյուջետային հայտերի հանրային քննարկումներին

Բյուջետային հայտերի հանրային քննարկումներին մասնակցությունը ցածր մակարդակի է հատկապես պետական մարմիններում:

Ճյուղային նախարարություններում բյուջետային քննարկումների ժամանակացույցի վերաբերյալ շատ ՔՀԿ-ներ տեղեկացված չեն, իսկ չմասնակցելու հիմնական պատճառը բյուջեն վերլուծելու համար ռեսուրսների/փորձագիտության բացակայությունն է:

Թեև ճյուղային նախարարություններում բյուջետային հայտերի հանրային լսումների հարաբերական անարդյունավետության հիմնական պատճառը ՔՀԿ-ների պատրաստվածության բացակայությունն է, ամեն դեպքում՝ նախարարության ներկայացուցիչները կարող են ավելի ընկալունակ լինել ՔՀԿ-ների մտահոգությունների նկատմամբ:

Չնայած այն հանգամանքին, որ ճյուղային նախարարությունների հետ քննարկումներին մասնակցությունը բավարար մակարդակի չէ, տարեկան բյուջետային գործընթացի մյուս փուլերին մասնակցությունն էլ ավելի ցածր է: Ազգային ժողովում քննարկումները շատ մակերեսային են մնում: Հաշվեքննիչ պալատը նույնպես շատ պասիվ է:

Որոշ անկախ փորձագետներ կարծում են, որ բյուջեի նախագծի վրա ազդելու ներուժը ամեն դեպքում սահմանափակ է, քանզի այն հիմնված է համապատասխան ոլորտային ռազմավարությունների վրա, և, հետևաբար, ավելի արդյունավետ կլինի, եթե ՔՀԿ-ներն իրենց ջանքերը կենտրոնացնեն տարբեր ռազմավարությունների նախագծերի մշակմանը մասնակցելու վրա:

ՔՀԿ-ների մասնակցությունը ՏԻՄ-ի բյուջեի գործընթացին ավելի տարածված է, և հարցումը լրացրած ՔՀԿ-ների մեծամասնությունը նշել է, որ իրենք կապի մեջ են եղել իրենց ՏԻՄ-ի հետ բյուջեի հարցերի քննարկման շրջանակներում:

ՔՀԿ-ների իրազեկվածությունը պարզեցված բյուջեների վերաբերյալ և մասնակցությունը պարզեցված բյուջեների կազմմանը

ՖԽՔ-ների տվյալները ցույց են տալիս, որ ՔՀԿ-ները շատ քիչ են տեղեկացված քաղաքացու բյուջեների մասին: Փորձը ցույց է տալիս, որ նրանք ավելի հաճախ օգտվում են www.gov.am կայքի ինտերակտիվ բյուջեից, քան մուտք գործում ՖՆ կայքի քաղաքացու բյուջեի բաժին:

Քաղաքացու բյուջե կազմելը հստակորեն պահանջում է կոնկրետ տեխնիկական հմտություններ, և զարմանալի չէ, որ ՔՀԿ-ներից գրեթե ոչ մեկը չունի այդ հմտությունը: Ըստ հարցման՝ 2022 թվականին ՔՀԿ-ներից միայն մեկն է թիրախային ոլորտներում քաղաքացու բյուջեներ կազմել:

Շահերի պաշտպանություն

ՔՀԿ-ների հարցման, ՖԽՔ-ների և հարցազրույցների արդյունքներից պարզ դարձան բյուջետային ոլորտում շահերի պաշտպանության համատարած բացթողումները, ինչպես նաև ՔՀԿ-ների՝ և՛ կոնկրետ վերապատրաստման, և՛ ավելի ընդհանուր կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:

ՔՀԿ-ներին բյուջետային ոլորտում շահերի պաշտպանության մեջ ներգրավելուն խանգարող խոչընդոտներից են ոչ միայն կոնկրետ հմտությունների և ռեսուրսների բացակայությունը, այլև մտահոգությունը, որ ջատագովության ջանքերը դրական արդյունքների չեն հանգեցնի:

ՔՀԿ կարողությունների զարգացման կարիքները

ՔՀԿ-ներն ունեն կարողությունների զարգացման մի շարք կարիքներ, որոնք ընդգրկում են ոչ միայն բյուջետային գործընթացում անմիջականորեն ներգրավվածության հետ կապված, այլ նաև ավելի ընդհանուր հարցեր, որոնք ազդում են նրանց արդյունավետ գործունակության վրա: Այսպիսով՝ կարողությունների զարգացման կենտրոնացման ոլորտները դիտարկելիս բյուջեի վերլուծության, մոնիտորինգի և շահերի պաշտպանության հիմնական թեմաներից բացի, կան նաև ավելի ընդհանուր կարիքներ, ինչպիսիք են ռազմավարության պլանավորումը և առաջնահերթությունների սահմանումը, մարդկային ռեսուրսների զարգացումը,

ծրագրերի և ծառայությունների հատկորոշումը և ուժեղացումը, շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունները և ֆինանսական կայունությունը:

Առաջարկություններ ծրագրին

Իրազեկվածություն և մասնակցություն

Պարզեցված (քաղաքացու) բյուջեներ

Ծրագիրը պետք է խրախուսի երկխոսությունը (հետադարձ կապի խրախուսման գործընթաց), որպեսզի պարզեցված բյուջեն ավելի տեղին դարձնի.

- Դասընթացներ անցկացնել, բարձրացնել բյուջեների գործընթացների և պարզեցված բյուջեների մասին իրազեկվածության մակարդակը, որպեսզի ավելի շատ ՔՀԿ-ներ օգտվեն և վերլուծեն դրանք
- Այդ ՔՀԿ-ների հետ հետադարձ կապ պահել. արդյո՞ք պարզեցված բյուջեներից հեշտ է օգտվել, արդյո՞ք դրանք օգտակար են:
- Դիտարկել պարզեցված բյուջեների կազմման մոտեցումների հետևյալ սկզբունքները/փոփոխությունները.
    - Ներառել գնահատում առ այն, թե արդյո՞ք նպատակները իրագործվել են
    - Ներառել նախորդ տարիների հետ համեմատություն՝ ծախսերի միտումը ցույց տալու նպատակով
    - Կազմել պարզեցված բյուջեներ, որոնք կենտրոնացած են առանձին խնդիրների վրա, օրինակ՝ հանրակրթական, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագրեր
    - Բյուջեի նախագծի փուլում նախատեսել պարզեցված բյուջեի հրապարակումը, որպեսզի ՔՀԿ-ները վերլուծեն այն նախքան բյուջեի ընդունումը:

- Վերոնշյալ փոփոխությունները պետք է կիրառվեն ծրագրով կազմված պարզեցված բյուջեների մասով, ինչպես նաև պետք է բարձրացվեն պետական գործընկերների հետ քննարկումներում:

Ռազմավարական զարգացում

Խրախուսել ՔՀԿ-ների մասնակցությանը ռազմավարության փուլին, քանզի դա ուղղակիորեն ազդելու է ապագա բյուջեների վրա: Դրա համար ՔՀԿ-ները պետք է բարելավեն իրենց ռազմավարական պլանավորման և մշտադիտարկման կարողությունները:

Շահերի պաշտպանություն

Ընդհանուր

Կոնկրետ շահերի պաշտպանության հմտությունների և ընդհանուր կառավարական կարողությունների բարելավման վերապատրաստումից բացի՝ ՔՀԿ-ները նաև պետք է վստահ լինեն, որ կարող են ազդել իրենց պետական և ՏԻՄ գործընկերների վրա: Ծրագիրը կարող է օգնել հետևյալ օրինակներով.

- լավ պրակտիկ օրինակների և միջազգային փորձի տրամադրում ՔՀԿ-ներին ոգեշնչելու համար
- Պետական և ՏԻՄ գործընկերների հետ երկխոսության նպաստումը, որպեսզի ՔՀԿ-ները ճանաչվեն որպես իրավասու զրուցակիցներ.

Ծրագիրը պետք է նաև խրախուսի ՔՀԿ-ներին որդեգրել գենդերային հավասարության մոտեցում՝ ինչպես իրենց ներքին կառավարման, այնպես էլ արտաքին հարաբերություններում, քանի որ դա կարող է օգնել նրանց ավելի ազդեցիկ դարձնել իրենց շահերի պաշտպանության ջանքերում:

Ցանցեր և կոալիցիաներ

Ծրագիրը պետք է խրախուսի գրանցված և չգրանցված ցանցերի, կոալիցիաների /ինչպես նաև նմանատիպ համագործակցության ձևերի/ գործունեությունը և/կամ ձևավորումը՝ միգուցե դրամաշնորհման գործընթացում նախապատվությունը տալով ՔՀԿ կոալիցիաներին: Սա ՔՀԿ-ներին հնարավորություն կտա համախմբել ռեսուրսները և պետական մարմինների հետ երկխոսության միասնական ճակատ ներկայացնել. գործոններ, որոնք կբարձրացնեն նրանց պրոֆեսիոնալիզմն ու ազդեցության շրջանակները: Գենդերային հավասարության մոտեցումը կարևոր կլինի նման ցանցերի և կոալիցիաների ներկայացուցչական բնույթն ապահովելու համար:

Բյուջեի վերլուծություն

Ցանկալի է, որ ծրագիրն ընդունի կարողությունների զարգացման տարբերակված մոտեցում. ընդհանուր կարողությունների զարգացում ՔՀԿ-ների հիմնական մասի համար և խորացված կարողությունների զարգացում մասնագիտացված կամ առաջադեմ ՔՀԿ-ների համար: Վերջինիս համար լավ կլինի, որ այդ խորացված կարողությունների զարգացման դասընթացները ներառեն այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ ՔՀԿ-ները կկարողանան ավելի խորացված վերլուծություններ կատարել բյուջեների տրամաբանական կառուցվածքն ամրապնդելու համար, օրինակ.

- Բյուջեի վերլուծություն Կայուն զարգացման նպատակների (SDG) տեսանկյունից
- Բյուջեի ցուցանիշների համապատասխանության և օգտակարության վերլուծություն
- Ճյուղային նախարարության բյուջեի և համապատասխան ոլորտային ռազմավարության միջև կապի ուսումնասիրություն. ռազմավարական առաջնահերթությունները ամբողջությամբ կամ ճշգրի՞տ են արդյոք արտացոլված բյուջեում:
- Տարեկան բյուջեի կատարողականի վերլուծություն. արդյո՞ք բյուջեում հաճախակի են եղել փոփոխությունները, և արդյո՞ք դրանից հետևում է բյուջեի որոշակի ծախսերի ծավալը ճշգրիտ գնահատելու ձախողում: Կա՞ն դասեր, որոնք կարելի է քաղել հաջորդ տարվա բյուջեի համար:

- Ինչ վերաբերում է ՔՀԿ-ների՝ Ազգային ժողովի քննարկումներին մասնակցությանը, միջազգային լավագույն փորձը հայտնաբերել է մի շարք գործիքակազմեր, որոնք ՔՀԿ-ները կարող են կատարել՝ իրենց ազդեցությունը մեծացնելու համար: (Ընդ որում, հարկավոր է նկատել, որ ստորև նշված որոշ կետեր վերաբերում են նաև բյուջետային գործընթացի մյուս փուլերին, օրինակ՝ նախարարությունների հետ քննարկումներին)

    - Նախորդ տարվա բյուջեի ամփոփագրի պատրաստում, որը կարող է լինել այլընտրանքային տեսակետ՝ կառավարության ներկայացրածին համեմատ, և կարող է ուղղորդել բանավեճը: Սա կարող է լինել ամբողջ պետական բյուջեի մասով կամ ոլորտային/նախարարության բյուջեի մասով:

    - Բյուջետային գործընթացի վերաբերյալ ուսուցման տրամադրում, որը կարող է առաջարկվել ԱԺ անդամների/աշխատակիցների և ՔՀԿ ներկայացուցիչների խառը խմբերին՝ դրանով իսկ հեշտացնելով կապերի ստեղծումը: Դասընթացը կարող է ներգրավել բյուջետային և հաշվապահական փորձագետների՝ խորը փորձաքննություն տրամադրելու համար:

    - Բյուջեի կոնկրետ գլխամասերի կամ բյուջետային տողերի վերլուծություն՝ աղքատամետ քաղաքականության տեսանկյունից: Իսկ եթե ռեսուրսները թույլ տան, ՔՀԿ-ների ցանցը կարող է մշակել աղքատության վրա ազդեցության գնահատում՝ բացատրելով բյուջեի ակնկալվող ազդեցությունը մարգինալացված խմբերի վրա այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, բարեկեցությունը և գյուղատնտեսությունը:

- Նմանապես, ՔՀԿ-ները կարող են ներկայացնել կոնկրետ մակրոտնտեսական խնդիրների և բյուջեի հետ դրանց փոխկապակցվածության վերլուծություն (օրինակ՝ պետական պարտքը, զբաղվածությունը և տնտեսական աճի միտումները): Սա կարող է արժեքավոր հակակշիռ լինել պաշտոնական խիստ լավատեսական գնահատականին:
- Միջճյուղային բյուջետային վերլուծությունը կարող է դիտարկել մի շարք ոլորտներ՝ կոնկրետ շահառուների որևէ խմբի վրա դրանց ազդեցության տեսանկյունից, ինչպիսիք են, օրինակ, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք կամ ազգային փոքրամասնությունները: Նմանապես, կարելի է կենտրոնանալ գենդերային ազդեցության կամ երեխաների վրա ազդեցության հարցերի շուրջ՝ հաշվի առնելով այդ ոլորտներում երկրի միջազգային պարտավորությունները:
- Հարկային քաղաքականության վերլուծությունը կարող է դիտարկել աղքատամետ քաղաքականության վրա հարկման հավանական ազդեցության խնդիրը:
- Օրենսդիր մարմնում նախնական քննարկումներից հետո ՔՀԿ-ները կարող են ամփոփել բանավեճի հիմնական կետերը և առաջարկել իրենց եզրակացությունները: Ամփոփագրի տարածումը (ԶԼՄ-ներում կամ սոցիալական ցանցերում) կարող է ազդել ընթացող բանավեճի վրա:

ՔՀԿ կարողությունների զարգացման կարիքները

Զբաղվել ՔՀԿ-ների կարողությունների զարգացման հարցերով

Բյուջեի վերլուծություն

Ծրագրի կարողությունների զարգացման ջանքերը պետք է ընդգրկեն հետևյալ խնդիրները.

Առաջնահերթ հմտություններ

- Գիտելիքներ բյուջեի պարբերաշրջանի (ցիկլի) և դրա վրա ազդեցության հնարավոր կետերի մասին՝ ներառյալ ռազմավարական մոտեցման ընդունումը, առաջնահերթությունների սահմանումը և ՔՀԿ-ների կողմից քաղաքականության մշակման ավելի վաղ փուլերի վրա ազդելու հնարավորության ընդունումը
- Բյուջեի վերլուծություն

- Տվյալների աղբյուրներ և վերլուծություն
- Փաստահենք քաղաքականության մշակում
- ՔՀԿ-պետություն/ՏԻՄ երկխոսության հմտություններ
- Մշտադիտարկման հմտություններ
- Շահերի պաշտպանության հմտություններ՝ շահագրգիռ կողմերի սահմանում, արշավների նախագծում և պլանավորում, նպատակային նամակագրում, ներկայացման հմտություններ, շահագրգիռ կողմերի ներգրավվածություն, ցանցային կապեր

Կողմնակի հմտություններ

- Ֆինանսական կայունության հմտությունների բարելավում, ինչպիսիք են ֆինանսական աղբյուրների հայթայթումը և դիվերսիֆիկացումը
- Ե՛վ քաղաքականության, և՛ կազմակերպչական զարգացման (նաև ինքնագնահատման) ռազմավարական զարգացման հմտություններ. (կազմակերպության զարգացումը ներառում է մարդկային ռեսուրսներ, ծրագրեր և ծառայություններ, արտաքին հարաբերություններ)
- Մարդկային ռեսուրսների զարգացման շրջանակներում գենդերային հավասարությունը պետք է լինի հատուկ ուշադրության ներքո: Գրավոր քաղաքականություն ունենալու հետ մեկտեղ ՔՀԿ-ները պետք է կազմակերպեն ներքին վերապատրաստման դասընթացներ՝ ընդգծելու գենդերային հավասարության մոտեցման կարևորությունը և ապահովելու քաղաքականության կիրառումը գործնականում:
- Շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցություն (շահառուների, պետության և ՏԻՄ-ի գործընկերների, ինչպես նաև ավելի լայն հանրության հետ)
- Կոալիցիաներ և գործընկեր ցանցեր ստեղծելու հմտություններ

Ի լրումն այս ամենի՝ ծրագիրը կարող է դիտարկել անհատների համար կարողությունների զարգացման վերապատրաստման դասընթացներ ձեռնարկելը կամ մոդուլները հասանելի դարձնելը:

Առաջարկություններ քաղհասարակությանը

Իրազեկվածություն և մասնակցություն

Ռազմավարական զարգացում

Մասնակցել ռազմավարության փուլին, քանզի դա ուղղակիորեն ազդում է ապագա բյուջեների վրա: Դրա համար ՔՀԿ-ները պետք է բարելավեն իրենց ռազմավարական պլանավորման և մշտադիտարկման կարողությունները:

Շահերի պաշտպանություն

Բյուջեի վերլուծություն

Ցանկալի է, որ ՔՀԿ-ները բյուջեների տրամաբանական կառուցվածքն ամրապնդելու համար ավելի խորացված վերլուծություններ կատարեն: Օրինակները ներառում են.

- Բյուջեի վերլուծություն Կայուն զարգացման նպատակների (SDG) տեսանկյունից
- Բյուջեի ցուցանիշների համապատասխանության և օգտակարության վերլուծություն
- Ճյուղային նախարարության բյուջեի և համապատասխան ոլորտային ռազմավարության միջև կապի ուսումնասիրություն. ռազմավարական առաջնահերթությունները ամբողջությամբ կամ ճշգրի՞տ են արդյոք արտացոլված բյուջեում:
- Տարեկան բյուջեի կատարողականի վերլուծություն. արդյո՞ք բյուջեում հաճախակի են եղել փոփոխությունները, և արդյո՞ք դրանից հետևում է բյուջեի որոշակի ծախսերի ծավալը ճշգրիտ գնահատելու ձախողում: Կա՞ն դասեր, որոնք կարելի է քաղել հաջորդ տարվա բյուջեի համար:

- Ինչ վերաբերում է ՔՀԿ-ների՝ Ազգային ժողովի քննարկումներին մասնակցությանը, միջազգային լավագույն փորձը հայտնաբերել է մի շարք գործիքակազմեր, որոնք ՔՀԿ-ները կարող են կատարել՝ իրենց ազդեցությունը մեծացնելու համար: (Ընդ որում, հարկավոր է նկատել, որ ստորև նշված որոշ կետեր վերաբերում են նաև բյուջետային գործընթացի մյուս փուլերին, օրինակ՝ նախարարությունների հետ քննարկումներին)

    - Նախորդ տարվա բյուջեի ամփոփագրի պատրաստում, որը կարող է լինել այլընտրանքային տեսակետ՝ կառավարության ներկայացրածին համեմատ, և կարող է ուղղորդել բանավեճը: Սա կարող է լինել ամբողջ պետական բյուջեի մասով կամ ոլորտային/նախարարության բյուջեի մասով:

    - Բյուջեի կոնկրետ գլխամասերի կամ բյուջետային տողերի վերլուծություն՝ աղքատամետ քաղաքականության տեսանկյունից: Իսկ եթե ռեսուրսները թույլ տան, ՔՀԿ-ների ցանցը կարող է մշակել աղքատության վրա ազդեցության գնահատում՝ բացատրելով բյուջեի

ակնկալվող ազդեցությունը մարգինալացված խմբերի վրա այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, բարեկեցությունը և գյուղատնտեսությունը:

- Նմանապես, ՔՀԿ-ները կարող են ներկայացնել կոնկրետ մակրոտնտեսական խնդիրների և բյուջեի հետ դրանց փոխկապակցվածության վերլուծություն (օրինակ՝ պետական պարտքը, զբաղվածությունը և տնտեսական աճի միտումները): Սա կարող է արժեքավոր հակակշիռ լինել պաշտոնական խիստ լավատեսական գնահատականին:
- Միջճյուղային բյուջետային վերլուծությունը կարող է դիտարկել մի շարք ոլորտներ՝ կոնկրետ շահառուների որևէ խմբի վրա դրանց ազդեցության տեսանկյունից, ինչպիսիք են, օրինակ, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք կամ ազգային փոքրամասնությունները: Նմանապես, կարելի է կենտրոնանալ գենդերային ազդեցության կամ երեխաների վրա ազդեցության հարցերի շուրջ՝ հաշվի առնելով այդ ոլորտներում երկրի միջազգային պարտավորությունները:
- Հարկային քաղաքականության վերլուծությունը կարող է դիտարկել աղքատամետ քաղաքականության վրա հարկման հավանական ազդեցության խնդիրը:
- Օրենսդիր մարմնում նախնական քննարկումներից հետո ՔՀԿ-ները կարող են ամփոփել բանավեճի հիմնական կետերը և առաջարկել իրենց եզրակացությունները: Ամփոփագրի տարածումը (ԶԼՄ-ներում կամ սոցիալական ցանցերում) կարող է ազդել ընթացող բանավեճի վրա:

Առաջարկություններ՝ կառավարությանը և պետական մարմիններին

Իրազեկվածություն և մասնակցություն

Ճյուղային նախարարությունները կարող են ավելի աջակցող լինել ՔՀԿ-ների կարիքների և մտահոգությունների նկատմամբ

Կենտրոնանալ առաջնահերթ ոլորտների վրա

- Նախարարը (կամ հանրային քննարկման գործընթացում ներգրավված նախարարության բարձրաստիճան պաշտոնյան) բյուջեի նախագիծը տարածելիս կարող է ներկայացնել մի քանի հիմնական ուղղություններ/առաջնահերթություններ: Սա կարող է լինել բյուջետային

հայտերի հանրային քննարկումների ժամանակացույցի հայտարարության ներածական խոսքի կամ տեսահոլովակի միջոցով:

- Նմանապես, քննարկումները սկսելիս նախարարության բարձրաստիճան պաշտոնյան կարող է սահմանել բյուջեի հիմնական առաջնահերթությունները՝ խուսափելով տեխնիկական տերմինաբանությունից և կենտրոնանալով այն առաջընթացի վրա, որը ակնկալվում է գրանցել տվյալ բյուջեի իրացման ժամանակահատվածում:

Ուղղորդել քննարկումը

Բյուջետային հայտերի հանրային քննարկումների ժամանակ բանավեճի մակարդակը բարելավելու նպատակով քննարկումը կարելի է կառուցել հետևյալ առանցքային հարցերի շուրջ.

- Արդյո՞ք բյուջեն արտացոլում է այդ ոլորտում առկա առաջնահերթությունները:
- Արդյո՞ք այն հիմնված է համապատասխան ռազմավարության/ռազմավարությունների վրա:
- Արդյո՞ք բյուջեի նպատակներն ու ցուցանիշները իրատեսական են և օգտակար:

Հասարակական խորհուրդներ

Նախարարություններում պետք է նշանակվի այն անձը, ով պատասխանատու կլինի ՔՀԿ-ների հետ կապ հաստատելու համար, և որը կպահպանի և կթարմացնի էլփոստային հասցեների ցուցակը: Ճյուղային նախարարությունները պետք է հաշվի առնեն բյուջեի նախագիծը քննարկելու համար նախարարին կից հանրային խորհրդի նիստ հրավիրելու հարցը կամ գոնե խորհրդի բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով տեղեկացնեն բյուջեի լսումների ամսաթվերի մասին:

ՔՀԿ-ների ֆինանսավորում՝ մոնիտորինգ իրականացնելու համար

Մի քանի շահագրգիռ կողմեր, այդ թվում՝ անկախ փորձագետներ, առաջարկում են, որ այնպիսի բյուջե և մեխանիզմ տրամադրվի, որ ճյուղային նախարարությունները ֆինանսավորեն ՔՀԿ-ներին՝ ոլորտային բյուջեների պարբերական գնահատումներ իրականացնելու համար: Այսպիսով՝ ՔՀԿ-ների գնահատման հաշվետվությունները կհանգեցնեն բյուջետային ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման և ավելի լավ թիրախավորման: Որպես գնահատումների թիրախ՝ կարելի է ընտրել որոշակի շահառու խմբեր կամ բյուջեի տողեր:

Պարզեցված (քաղաքացու) բյուջեներ

- Ֆինանսների նախարարությանը առաջարկվում է դիտարկել պարզեցված բյուջեների կազմման մոտեցումների հետևյալ սկզբունքները/փոփոխությունները.

- Ներառել գնահատում առ այն, թե արդյո՞ք նպատակները իրագործվել են
- Ներառել նախորդ տարիների հետ համեմատություն՝ ծախսերի միտումը ցույց տալու նպատակով
- Կազմել պարզեցված բյուջեներ, որոնք կենտրոնացած են առանձին խնդիրների վրա, օրինակ՝ հանրակրթական, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագրեր
- Բյուջեի նախագծի փուլում նախատեսել պարզեցված բյուջեի հրապարակումը, որպեսզի ՔՀԿ-ները վերլուծեն այն նախքան բյուջեի ընդունումը:

Ազգային ժողովի կողմից ավելի մեծ ներգրավվածություն

Ազգային ժողովը կարող է ավելի ակտիվ լինել ՔՀԿ-ների հետ իրազեկման գործում: Այն կարող է դա անել մի քանի եղանակներով.

- ՔՀԿ-ների փոստային ցուցակների կազմում և նրանց հետ կապի հաստատում լսումների և քննարկումների ժամանակ
- ՔՀԿ-ներից հետադարձ կապի ակնկալիք՝ երկխոսության միջոցառումների ձևաչափի և օգտակարության վերաբերյալ
- ՔՀԿ-ների հետ կապի հաստատում ոչ միայն տարեկան բյուջեի նախագիծը քննարկելիս, այլ նաև նախորդ տարվա բյուջեի և ծրագրերի կատարողականը վերանայելիս:

Այլ եզրակացություններ

Քաղաքացիների ներգրավվածություն

ՔՀԿ-ների միջնորդությունից բացի, քաղաքացիների անմիջական ներգրավվածության կարիք նույնպես կա բյուջետային գործընթացում՝ նկատի առնելով այն, որ ՔՀԿ ոլորտը միշտ չէ, որ պատշաճ կերպով է ներկայացնում և տարածում են իրենց շահառուների անունից:

Զարգացումներ ՏԻՄ մակարդակում

ԲԿԳ ընթացիկ (5-րդ) հանձնառության համաձայն՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) Արմավիրում, Աշտարակում և Աբովյանում փորձնական ծրագիր է իրականացնում, ըստ որի՝ յուրաքանչյուր ՏԻՄ պետք է ունենա բյուջեի առանձին տող և հրավիրի տեղական շահագրգիռ կողմերին՝ քննարկելու, թե ինչպե՞ս ծախսել բյուջեի այդ տողը: Հետևաբար, GIZ-ի հայաստանյան գրասենյակին դիմելով ծրագիրը կարող է կապ ստեղծել այդ նախաձեռնության հետ:

Այլ առաջարկություններ

ՏԻՄ մակարդակում բանավեճի որակի աջակցություն

Չնայած որ ծրագրի հիմնական նպատակը ՔՀԿ-ների զարգացումն է, պետք է նկատի առնել, որ ՏԻՄ-երի շատ ավագանիներ վատ պատկերացում ունեն բյուջեի մշակման և վերլուծության մասին, և դա կարող է խոչընդոտել բյուջետային հայտերի հանրային քննարկումների արդյունավետությանը: Հետևաբար՝ ծրագրի կայքում պետք է դիտարկել կարողությունների զարգացման համար անհրաժեշտ նյութերի տրամադրումը՝ ՏԻՄ անդամներին բյուջետային գործընթացի վերաբերյալ իրենց պատկերացումները բարելավելու նպատակով: Սա կբարելավի ՏԻՄ բյուջետային հայտերի հանրային քննարկումների որակը:

Հավելվածների ցանկ

1. Տեխնիկական առաջադրանք
2. Մեթոդաբանական ժամանակացույց
3. ՔՀԿ հարցաթերթիկ
4. ՔՀԿ-ների ցանկ
5. ՖԽՔ-ների հարցաշար
6. Փորձագետների և պետության ներկայացուցիչների հետ հարցազրույցների համար հարցաշար
7. Փորձագետների ցանկ
8. Հարցազրույցների ցանկ
9. ՖԽՔ-ների ներկայության թերթիկներ
10. ՔՀԿ հարցման վերլուծական հաշվետվություն
11. ՔՀԿ հարցման պատասխանների շտեմարան
12. Ելակետային ցուցիչների և արժեքների աղյուսակ